

ԻՆՉՈՒՒ ՉԵՆ ԽՆԴԱՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Ընտանեկան հաւաքոյթի մը մէջ էի. բոլոր ներկաները մարելու աստիճան կը խնդային՝ ունկնդրած ըլլալով պատմութիւն մը: Սենեակին մէջ կային նաեւ շուն մը եւ կատու մը: Կամաց մը ծռեցայ ու ըսի անոնց.

-Դուք ինչո՞ւ չէք խնդար:

Կատուն ըսաւ.

-Խնդալու սիրտ չունիմ:

Շունը, աւելի դասական, պատասխանեց.

-Երիկամունք ո՛չ ունիմ խնդալու համար:

Աջ կողմս գտնուող բարեկամի մը ըսի.

-Բոլորը կը խնդան՝ բացի կատունէն ու շունէն:

Եւ բարեկամս ինծի ըսաւ.

-Օր մը հաւաքուած էինք Կոստանտաններուն տունը բազմաթիւ բարեկամներ: Բոլորս ալ խմած էինք եւ շատ ուրախ տրամադրութեան մէջ: Սենեակը լեցուն էր ծիծաղներով: Մեր մէջ միայն մէկը կար, որ խորապէս տխուր էր: Քանի մը անգամ մշտած էինք զինքը, որ մասնակցի մեր զուարթութեան՝ թօթափելով իր տրտմութիւնը: Անիկա կարծես քարացած էր իր թախիծին մէջ: Յանկարծ տան շունը մտաւ սենեակէն ու գնաց կեցաւ տխուր մարդուն առջեւ: Քիչ վերջը իր երկու թաթերը դրաւ անոր ծունկերուն վրայ ու սկսաւ խորունկ, խորունկ նայիլ մելամաղձոտին աչքերուն: Երկար տեւեց շան այդ քննական եւ հաղորդական դիրքը: Կես գիշերին մեր տխուր բարեկամը բաժանման ժամանակ յայտարարեց. «Բարեկամներ, ձենէ մէկը թող այս գիշեր միևնաջ չթողու զիս: Ընկերակցութեան մը պէտք ունիմ»: Ամենքը միաբերան անոր պատասխանեցին. «Յիմար-յիմար դուրս մի՛ տար: Տունդ գնայ ու պառկէ»: Մարդը ուղղուեցաւ դէպի դուռ: Շունը ընկերացաւ իրեն մինչեւ տանը սեմը՝ խուլ հեծկտուքներ արձակելով: Մեր տրտում բարեկամը մեկուսի մեկնեցաւ տուն: Յետեւեալ օրը լսեցինք, որ նոյն գիշերը անձնասպանութիւն է գործեր: Չե՞ս խորհիր, որ կենդանիները մենէ շատ աւելի խորապէս կը տեսնեն ցաւերն ու տրտմութիւնները եւ սիրտ չունին խնդալու: